

դէպի Մխիթարի յիշատակը։ Մխիթար երկոշնարիշ տարի վերջն ալ կ'ապրի իր գործին մէջ, և իր արդիւններամ ազգոգոշտ շարժումով։ Ոչրախ եւր յայտարարելոշ որ Հայ Մամուշը գիտակցօրէն վեր հանեց Մխիթարի կատարամ դերը հայ ժողովոշդի վերազարթօնի հսկայ ձեռնարկին մէջ։ Հսկայ էր արդարեշ այդ ձեռնարկը, և լոշատոշր՝ այն հանձարեղ ճրագիւրը, գոր աւն գճեց ժ. դարոշ տեմին վրայ, սրատեւ հայեացքովը դիտելով ապագան։ Հայ Մամուշը շեշտելով Մխիթարի և Մխիթարեաններոշ այդ ազգանօշէր գործը, կատարեց անշշտ իր պարտքը, և ինչպէս ըսինք, շատերն անօնցմէ օնցիսկ օնշիրելով երկար էջեր և բացաշիկ քիշեր։ Աշերորդ կը համարինք քոշեղ այն քոշոր օրաքերերը որ իջան ապարեղ, երբ կը հաշատեմք քէ անխտիր Մփիշէքի գրեքէ քոշոր քերքերը և օրագրերը մրցեցան իրաւոշ հետ արձագանց տարոշ մեճ եղեւոշքեան։ Սակայն անօնց մէջ աննշմար անցներոշ չեն անօնք՝ որ բացաշիկ կարեւորոշքիշն տարով՝ օնշիրեցին օնաշեշ բացաշիկ քիշեր ոշ լայնօրէն արտայայտօշեցան ցարդ. աշսպես Աւեք (Թեհրան), Արեւ (Գահիրէ), Աւեաիք (Պէշրոշ), Բանբեր (Շրոշկարտ), Ժամանակ (Պոլիս), Հայրենիք (Պոսթոն), Ճատագայթ (Պոլիս), Մասիս (Պէշրոշ), Մարմարա (Պոլիս), Յօտաբեր (Գահիրէ), Պայքար (Պոսթոն), Սան (Պոլիս)։

Իշխանացիները քերթի նկարագրին և ուղղութեան համաձայն էր նսեւ նկարագիրը և տրուած շէշտը՝ այդ գնահատականն արտայայտութիւններուն. կրօնականները վեր հանեցին ձգրտօրէն Մխիթարի ոգին, շէշտեցին իր մէջ Աստուծոյ մարդը, կրօնաւորը,

առերը, Նախնեաց հոգւով վառուած
կրօնքի առաքեալը՝ նախ քան իր մէջ
տեսնէր, հայկական գրականութեան
վերաճնունդի հիմնադիրը։ Աշխար-
հիկները շէշտեցին ընդհակառակն իր
մէջ գիտունը, գրի մարդը, հայ ազգին
մշակութային կեանքին վերաճնողը։
Երկու տեսակէտներն ալ ուղիղ՝ որոնք
կը ձկուէին ամբողջացնելու Մեծն
Մխիթարի դիմագիծը, նկատելով
զայն իր ազգին հարազատ զաւակը
և Ազգը՝ երախտաւորեալն այդ մեծ
Հայուն։

«Ազգ մը, որ երեւան թերամ է Մխիթարի մեան մէկը, այդ ազգը չի մեռնիր» ըսած է Վսեմ. Կարդինարը՝ Գրիգոր Աղաձաւեան, Հոգեւոր Պետր Հայ Կաթողիկէ Համայնքին՝ Մայիս 1-ին Պէյրոսքի մէջ տրուած հանդէսի մը առթիւ. որովհետեւ աւելի իսկական մահէն վերջապէս է իր ժողովուրդը, մտքի և հոգիի կենսունակութեան դէմ դաշաձանող սպառնալիքին, որ ահաւորագոյն է քան միշտ մահը՝ որ կը քայքայէ մեր նիւթական կազմը: Ազգ մը կը մեռնի այն ժամանակ՝ երբ տէր չէ իր լեզուին, իր անցեալին, իր պատմութեան, իր գրականութեան: Մխիթար վերանորոգեց անցեալը, Ռսկեդարը՝ իբրեւ գրական շարժում մեզի վերադարձոց, վերանորոգեց մահաշունդ Լոռաւանքի յոյս հաշտութիւն թախանդակ գեղեցկութիւնը և չերմոռնիր՝ Ընդհանրական Եկեղեցոյ հետ համերաշխութեան և ներդաշնակութեան ուղիով, որ ձգմարիտ ուղիին էր մեր յոշւամիտ Նախնիքներու տիեզերածաշաղ մտքին:

Անմահ սրդարեւ իր յիշատակը և իր գործը՝ որոշեւ առջեւ երկիւղածօրեւ կր խոնարհի բովանդակ Հայ Ազգը:

ኤምፍሊዮቦ በኢፑኮኒኒ

ԱՐԲՈՒՆԻ ՏԻՒՄԱՐ

(1842-1901)

(Смр. Рмқд., 1949, бл 5-6, էջ 102)

ՄԱՅՏՏԱՅԻ ԳԱՂԱՔԱՐԱՆԻ ՕՍԱԿԱՆՆ ԹԵՐՈՒ-
ԹԻԻՆՆԵՐԸ. - ՄԻՐԱՆՈՅԵ ԵՒ ԱՐԱՔՄԻԱ. -
ՎԻՊԱԳԻՐԸ, ԳՐԱԳԵՏԸ ԵՒ ԸՆԿԵՐԱՐԱՆԸ
ՍՐԲՈՒՂԻ ՏԻԻՍԱՐԻ ՄԻՋ:

Մայրա Տիւտարին առաջին փորձն է՝
Հոն նէ գաղափարախօսական յայտնի ճի-
գեր կը կատարէ, տալով իր գործին վար-
դապետական հանգամանք մը, վիսասելով
վիպական կազմին, առանց սակայն բո-
ւորովին զայն ոչնչացնելու։ Յայտնի են
հոն վիպական և փիլիսոփայական զոյգ
ուղղութիւնները, կամ աւելի ճիշտ մտա-
դրութիւններ, որոնք առանց իրարու հետ
խորապէս լծորդուելու առաջ կ'երթան
վէպի ընթացքին։ Այս կէտը առաջին ան-
գամ անդրադարձաւ Ռ. Յ. Պէլլաքեանը
«Ըստ իս (կ'ըսէ ան), այս վէպն երկու
տարբեր մասեր կը պարունակէ, մին վի-
պական, և միւսն իմաստասիրական, որք
նման երկու գետերու՝ գուզընթաց, բայց
առանց իրար խառնուելու կ'երթան, կը
շարունակուին գործին բովանդակ ընթաց-
քին մէջ իրարմէ գառ ու մեկին։ Կրնայ
Ըլլալ որ մին միւսին առթիւ գրուած լինի,
բայց չեն գրուած իրրեւ միմեանց հաս-
տատութիւն կամ մեկնութիւն. վասնզի
յայտնապէս կը տեսնուի թէ Տիկին Սի-
րայի փիլիսոփայական խորհրդածութիւն-
ներն մեծ կապ ու յարաբերութիւն չունին
վէպին դէպքերուն հետ ու իբր անկցորդ
ու անճաշ դրուագներ կու գան ընդհատել
վիպասանութեան թեւն»¹²։

Մենք վերը ըսինք արդէն՝ թէ Մայտայի Սիրաւն, ինքնին Տիւսաբն է, կամ անոր բերանը՝ որ կը խօսի, կը վարդապետէ, իր տեսակէտները ընդլայնել կը ջանայ, հոգ չէ թէ ատոնք բոլորը չեն հիւսուիր կամ չեն շագուիր վէպին մէջ։ Ասիկա առաջին նկատելիք կէտն է Մայտայի, որ իբր Roman à thèse անխուսափելիօրէն պիտի ինար այս թերութեան մէջ։

Տիւսար նպատակ ունի պայքարելու
նախապաշարումներու դէմ. բայց որոնք են
այդ նախապաշարումները՝ որ կինը կը
կաշկանդեն: Տիւսար ինքնին տարտամ է
և անկարող գտնելու բուն նախապաշա-
րումները, որ թոյլ չեն տար կնոջ՝ ազա-
տօրէն գործելու, մարդկային օրէնքները,
կրօնքը, պատիւը, բարոյականութիւնը և
երկիւղը՝ ընդվզելու այլ մարդու իշխա-
նութեան դէմ՝ յաճախ կը շեշտուին վէպի
ընթացքին՝ որպէս արգելքներ կնոջ համար,
հաւասարելու այլ մարդու: Պաշտպանելով
հանդերձ ընտանեկան մաքրութիւնը և հա-
ւատարմութեան ամենապիկնասական հարցը,
Տիւսար կը թուի անուղղակի վրդովել
կիներու հոգւոյն խաղաղութիւնը, տալով
տիպարներ անբարոյ և ապականեալ կի-
ներու, որոնք ըստ երեւոյթին կը վայելեն
« կարծուած ազատութիւնը » . Հերիգս
անսանձելի անկարգութեան օրինակ մը
Մայտայի մէջ, Ժառնք մը Սիրանոյշի մէջ,
Տիկին Արգարեան մը Արաքսիայի մէջ կը
ներկայացուին որպէս նախապաշարում-
ներն ոտնակոխող ազատ կիներ, որոնց
հակադրուած են Մայտա, Սիրանոյշ և
Արաքսիա՝ իբրեւ նահատակներ ընկե-

(12) *Երկրագունեա*, 1883. № 11, էջ 338.

5442 - Ch. h.



406-71

րային զեղծումներու, նախապաշարումներու, որոնց ցանցէն չեն կրնար իրենք զիրենք ձերբազատել, և հետեւաբար կը կրեն:

Անշուշտ Տիւսար չի հասնիր յայտնի բառերով այս եզրակացութիւններու, բայց վտանգաւոր դուռ մը կը բանայ ընթերցողին համար: Մարդկային օրէնքները՝ ընտանեկան սահմանները ամուր պահպանող, պատին ու բարոյականութիւնը բարձր բանող ազգայիններ՝ նախապաշարումներ են իրեն համար, ինչպէս նաեւ կրօնքը՝ որու մասին երբեք նպաստաւոր խօսք չունի Տիւսար, ընդհակառակն կը համարի զայն խիղճերը բռնաբարող կապ մը, որ թոյլ չի տար կնոջ՝ դուրս ելլելու իր կրօնական համոզումներէն: Մայրաքաղաքը, երբ ամէն կողմէ հալածուած, Հերիգայի նենգութիւններով ուխտադրուած մը ներկայացուած Տիգրանի աչքին, խոցուած յանդիմանի իր հաւատարիմ ու անկեղծ սիրոյն մէջ, կը վճռէ թողուլ աշխարհը բաշտելու համար աստուածանուէր կուսաններու վանք մը՝ բարեկամութիւն Սիրա ամէն ճիգ կը թափէ զայն իր այս ծրարէն հեռացնելու, զրգռելով անոր մէջ կրկին ամուսնութեան սէրը՝ ենթադրելով որ խորտակուած կին մը կրնայ փրկուիլ նոր փեսայի մը գիւտով, ծնողական գութը արթնցնելով անոր մէջ՝ հանգէպ իր արդէն ամուսնացած աղջկան Յուլիանէին, որ իրականին մէջ իրեն պէտք չունի, ունենալով հաւատարիմ ու սիրող ամուսին մը, կեանքի նեցուկ մը: Յայտնի է Տիւսարին ըով պայքարը կրօնքի դէմ՝ որպէս նախապաշարումի, շատ աւելի բնական ու բարոյական և կրօնական պիտի ըլլար՝ եթէ Սիրա զայն յորդորէր իր հուսկ միութեամբութիւնը գտնելու Աստուծոյ մէջ, աղօթքի մէջ: Ու այսպէս ազնուական ու բարձր գաղափարականի մը մղած պիտի ըլլար, որ յաճախ ամէնէն աւելի փրկարար լուծումը կրնայ տալ այդպիսի ալեկոծեալ կեանքերու երջանկութեան համար:

Տիւսար կ'ուզէ Մայրաքաղաքը զարմնել գործիչ մը, բարեգործութեան նուիրուած կին մը, իր սեռակիցներուն ընկերային վիճակը բարւոյեցնելու աշխատող մը, բայց այդ շատ անբնական պահանջ է խորտակուած կնոջ մը, որ տէրն իսկ չէ իր հոգեկան կարողութիւններուն: Շլատուած, հիւանդ արարած մը, զուրկ ամէն նիւթական միջոցներից, որոնք հարկաւոր են այդպիսի ձեռնարկի մը իրագործման համար: Հուսկ՝ Մայրաքաղաքը, Սիրայի յարատեւ զրգումներուն և առաջնորդութեան տակ, ամէնէն վերջ կը հիմնէ գործատուն մը՝ հոն հաւաքելու համար կարօտեալ կիները, աշխատութեամբ իրենց կեանքը ապահովելու: Եւ ահա միակ առաքելութիւնը և պատուը Տիւսարի՝ կանանց հասարակական գործունէութեան: Ինչո՞ւ հիմնել չի տար հայ աղջիկներու վարժարան մը, կամ անհայր-անմայրներու որբանոց մը, — որովհետեւ հեղինակը նպատակ ունի ցոյց տալ թէ աշխատութեամբ միայն կինը կը բարձրանայ, յարգել կու տայ իր անձը, կը յաջողի ազատ խորհիլ ու ազատ գործել, և վերջապէս անասուն մ'ըլլալէ զազրիլ: Յորդորելով կամ վարժեցնելով կինը աշխատութեան, ըստ իրեն, անհատական ազատութեան ճամբան կը հարթէ անոր առջեւ: Վանքի աշխատութիւնը դիւրակեցութեան կ'առաջնորդէ, դիւրակեցութիւնը անկախութեան, անկախութիւնը յառաջադիմութեան: Ասոնք են ահա Տիւսարի գաղափարները, որոնց ներքեւ յայտնապէս կը տեսնուի կինը ընտանեկան կապանքներէ ձերբազատելու ճիգ մը, և մղելու զայն ազատօրէն մտածելու ու ազատօրէն գործելու: Այս է բովանդակ հետեւութիւնը Մայրաքաղաքի մէջ: Եւս կը յանգի Տիւսարի գաղափարախօսութիւնը:

Սրբուհի Տիւսար անտեղիտալի մնաց թեր ու դէմ կատարուած քննադատութիւններու առջեւ: 1884-ին Սիրակոյը

և 1887-ին ալ Արաքսիս-ն հրապարակ հանեց, նուազ գաղափարախօսական խորքով և աւելի վիպական գործողութեամբ և բնութիւնով:

Սիրակոյը, նուիրուած է մօրը քաղցր յիշատակին, որ մայրենի քաջալերանքով կորով ու ներշնչում տուած էր իր կենդանութեանը, և առանց տեսնելու հատորին ի լոյս ընծայումը՝ փակած էր յաւիտեան իր աչքերը:

« Ողջ էիր, մայր (կ'ըսէ Տիւսար իր Յառաջարանին մէջ), յորժամ զրեցի զգրկւողիս այս զՍիրանոյշ: Զրեզ ընդ երկար ուսումնասիրելէ և բոլորովն անհուն հիացմամբ զարմանալէ վերջ՝ երբ զրեզ տիպ կ'ընտրէի ճշմարիտ մօր, և երբ ի տիկին Հայնուս ոչ թէ բոլոր խորասոյգ միտքդ, ոչ թէ բոլոր թափանցող գաղափարներդ, ոչ ջանայի անձնատուրի, այլ միայն մայրենի սիրոյդ գերազանց բարձրութիւնը, և անձնուիրութեանդ անհուն վսեմութիւնը, ով կրնար հաւատալ թէ օր մը այս նոյն զրեզը անմիջ յիշատակիդ պիտի նուիրէի: Ով կրնար հաւատալ մայր իմ »:

Սիրակոյը գրուած է յատկապէս ընտանեկան կեանքին պայմանները ուսումնասիրելու, և անյաջող ամուսնութեան մը աղետալի հետեւանդները շեշտելու համար: Հեղինակուհիին մտքին մէջ կայ դարձեալ ծրարի մը՝ պայքարելու ամուսնական կեանքին հիմը բանդող նախապաշարումի դէմ, նախապաշարում մը այս անգամ ծնողաց մէջ՝ որ իրենց գաւառներուն բախար կը կապեն իրենց կամքին ու շահերուն հետ: Սիրանոյշ հարուստ հօր զաւակ՝ կը պատկուի հարուստ Պր. Դաւեհանի մը՝ որ սիրուած չէ, բայց պարտադրուած հօրմէն՝ որ իր փառքը, շահը կը փնտռէ՝ քան երջանկութիւնը իր աղջկան: Սիրանոյշ զոհ է հետեւաբար իր հօր փառասիրութեան և շահասիրութեան: Դարեհեան ինքնին անբարոյ մարդ, կասկածոտ նախանձախնդիր իր կնոջ, զայն

տան մէջ արգելափակած է և ո՛ր և է տեսակցութիւն մը ուրիշ անձերու հետ, յինքնան անմեղ և անտարբեր, նախանձախնդութեան առթիւներ են՝ տանջելու համար իր ընկերուհին: Սիրանոյշ սիրած էր և նուիրած իր սիրտը մանկութեանը ընկեր խրուանդին, բայց հօրը սպառնալիքները, հակառակ մայրենի աղաչանքներուն, յաջողած էին կապել զինքը չսիրուած անձի մը, որ հուսկ ոչ թէ միայն կը դաւաճանէ ամուսնական հաւատարմութեան դէմ, այլ իր չարարարոյ ու խստասիրտ վերաբերմունքով կը հիւժէ զայն՝ մահուան դուռը մօտեցնելով: Անտեղի կասկածներու, լիկիչ հալածանքի անվերջ տարափին տակ՝ Սիրանոյշ վերջացած կին մ'է այլեւս, որուն անմեղութեան և առաքինութեան գեղեցիկ տիպարը՝ հակադրուած անկարգ ու ցոփակեաց Ժանէթի մը պատկերին հետ՝ Տիւսարի գրչին տակ դարձած է կնոջ դատին ամէնէն համակրելի փաստերէն մին, որ կ'աղաղակէ անհրաժեշտութիւնը ազատութեան՝ կեանքի ընկերը ընտրելուն մէջ: Ասով կ'ապացուցուի նաեւ թէ հոգեկան միութիւնը և նկարագրի համաձայնութիւնը էական պայմանն է ամուսնական կեանքին: Տիւսար յաջողած է իր նպատակին մէջ, ու Սիրակոյը վէպը՝ հակառակ քիչ մը աւելորդ ընդլայնումներու իր ինչ ինչ մասերուն՝ վիպական աւելի կատարեալ կառուցուածք մ'ունի քան Մայրաքաղաքը, բայց անկատարի անցած է՝ չունենալով նորութիւնը գաղափարի, և կիներու դատին պաշտպանութեան այն ջերմութիւնը՝ որ ունեցաւ առաջին վէպը:

Արաքսիս, նուիրուած է Տիւսարէն իր աղջկան Տոռինի, որ յետոյ վաղամեռիկ՝ այնքան խոր պիտի խոցէր մօր սիրտը, « Դուստր իմ, քեզ կը նուիրեմ այս երրորդ և զուցէ վերջին երկս: Տղայ հասարակէ սկսէ սիրել զաշխատութիւն իրեն կէտէ սիրել զաշխատութիւն իրեն գաղափարախօսութեան և շահասիրութեան: Դարեհեան ինքնին անբարոյ մարդ, կասկածոտ նախանձախնդիր իր կնոջ, զայն

նուիրէք պայծառացնելու ապիկար հօր և մօր մթազգած կայանը յոյսի և որդիական սիրոյ նշոյլներով, երբ կրտսեր եղբօր ապագայ մը կը պատրաստէր, երբ կը զգար թէ տառապանքի մատնուած հոգիներու նոր զուարթ աշխարհ մը կը բանար՝ ուր իրենց օրերը հեզահամբոյր կը սահին, և թէ այդ՝ ձեր գործն է, ձեր անխոնջ ջանքերուն արդիւնքն է, ձեր երիտասարդական հոգւոյն կոթողն է»¹⁷։

Ու այսպէս դեռ երկար, իր յիշուած «Կանանց անգործութիւնը» յօդուածին մէջ, կը խրախուսէ Տիւսար հայ դեռատի աղջիկները՝ որ աշխատութեան հետ կապեն իրենց հոգին, որով միայն կրնան բարձրանալ և ազնուանալ, քան այն բոլոր ազնուական կարծեցեալ կիները, որ պչրանքի ու պաճուճանքի, և սովորական դասակարգի կիները արհամարհելու իրենց

պժգալի յոխորտութեան մէջ կը կարծեն գտնել իրենց գերազանցութիւնը։

Ասոնք են ահա Տիւսարի ընկերարանութեան հիմնական գիծերը՝ որ հայ կնոջ ազատագրութեան հետ կապ ունին, որոնց մով անժխտելիօրէն արժանիք ունի նէ պոլսահայ կինը եւրոպական ու ամերիկեան ընթերցումին մօտեցնելու ձեռնարկին մէջ։ Իբրեւ ընկերարան՝ իր կատարած այս տկար փորձն ալ մեծապէս գնահատելի է, որուն օգտակար հետեւանքները վայելեց հայկական ընկերութիւնը՝ երբ արդէն Տիւսար վերջացուցած էր իր պայքարը և կեանքը։

(Վերջ) Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

(17) Տիւսարի յօդուած մը՝ «Կանանց անգործութիւնը» Թէոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ին մէջ, 1926, էջ 239-243։

ԳԵՂՈՆ ՀԱՅ ԼԵՋՈՒԻՆ

Ծովածաւալ ու ծաղկաշէն յոյս պարտեզ եւ դռն՝ Հայ լեզու,
Մշտակարկաւ ու աղեծուի, չիւնջ վրտակ եւ դռն՝ Հայ լեզու,
Դռն կը հոսիս Արարատէն միւսեւ ըստիւնք գերդ մեղրագետ.
Հայու Ողիւն աւելեց պահող՝ միւս կրքակ եւ — դռն՝ Հայ լեզու...

Դռն կանգնած եւ գերդ զրարքուն մեր պատմութեան վեմին դիմաց,
Արարատի սուրբ ձեռքիդ բիւրեւսին իջած եւ ցած,
Կը փոփոյի քու անունիդ սիւնն արիւնքող երկնաւրաց,
Ազատատենէ ու աներկիւ յաղթ բունակ եւ դռն՝ Հայ լեզու...

Հետեւեալն ու մօտեւեալն մեզ տուն կանգնող ձայն եւ թարի,
Հայրենադարձ մեզ շեփորող հաւայնական ձայն եւ արի,
Մարգագետնի մէջ դայրաշող շէն սոխակի ձայն եւ փայրի,
Հիւս պատմութիւնն ոգեկոչող նոր նրագ եւ դռն՝ Հայ լեզու...

Դռն՝ մանուկի շորքին ծաղկած՝ անմեղութեան փայրի եւ մերմակ,
Ու հայ կոյսի անբիծ մակտիւն՝ յար շողացող զարդ եւ սոստակ,
Մեր աներշտ ու կռու կամքին՝ յաւատ կանգուն բերդ եւ միակ,
Անպրոպագոռ երկիւրեքն ու շանրող փայրակ դռն՝ Հայ լեզու...

ՕՆԵԻԿ ԱՅՎԱԶԵԱՆՑ

22 փետր 1947
Մուսուլ

ԱՆԴԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՐՑԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ

(Շար. տես «Բազմ.» 1949, № 5-6 էջ 97-101)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քննադատական հակիրճ անդրադարձութիւններուն վերջ դնելով, ներկայիս մեր նպատակն է քննական ուսումնասիրութեամբ մը լուսարանել անդենական կեանքի մասին հրապարակ ելած բանավէճը՝ դաւանական ուղիղ կէտերը շեղտելու, սխալ ու մոլոր կարծիքներն ալ հերքելու դիտումով⁽¹⁾։

Աստուածաբանական մեր տեսութիւնը պիտի ջանանք ընթացիկ ոճով ներկայացնել, ընթերցողներու ուշադրութիւնը չսպառելու համար երկար ու անտեղի չեղումներով. աւելի խորը պրպտողներուն՝ ամփոփ ակնարկութիւններ պիտի թուենք ստորեւ, ծանոթութիւններու մէջ։

1. — Հիմնական նկատողութիւններ

Աստուծոյ դոյութեան եւ հոգւոյ անմահութեան անուրանալի դոյգ ճշմարտութեան

(1) Վիճարանութիւնը, որ կարծէք պահ մը դադրած էր, դեռ կը շարունակուի. Նախապէս մեր նշանակածներէն գատ, ահա միւս նոր գրութիւններուն ցուցակը. Մասիս, 1949. Մարտ 16, էջ 2. «Որդիք գեհնի», գրեց՝ Հայ հաւատացեալ. Հասկ, 1949. № 5, էջ 131-135. «Վերջ քաւարանի խնդիրին». գրեց՝ Փառէն Եպիսկոպոս. Մասիս, 1949. Յունիս 2, էջ 2. «Խօսքը ջուխ է. մէկը ըսէ, մէկը լսէ». գրեց՝ Հայ հաւատացեալ. Հասկ, 1949. № 6-7, էջ 191-192. «Վերջին խօսք՝ Հայ հաւատացեալի — Ջուխտ խօսք-ի». գրեց՝ Փառէն Եպիսկոպոս. Մասիս, 1949. Օգոստոս 10, էջ 2. «Խօսք ըսածդ կ'որ է. խորհէ, հարը զ'որ է». գրեց՝ Հայ հաւատացեալ.

թիւնները կապուած են մարդկային ցեղի ծագումին հետ։ Ծանօթ են մեր օրերու դիտական եւ ազդագրական հետազոտութիւնները՝ որոնք ակնյայտնի ցոյց կու տան այս անխախտ համոզումներու գոյութիւնը նախնական ժողովուրդներու մօտ, կրօնքի եւ բարոյականի ողջ ըմբռնումներով։

Բարձրացած իմացական տեսարանութեան՝ հեթանոս փիլիսոփայութեան երկու բեւեռները կը կազմեն այս ճշմարտութիւնները, որոնց շուրջ կը հոլովուին Պլատոնի, Արիստոտէլի, Կիկերոնի, Սենեկայի սքանչելի դրուս-գործոցները, թէպէտ երբեմն տարտամ որոնումներով, սայթաքումներով եւ կամ դադափարային չափազանցութիւններով խառն։

Երբայական շրջանի բարոյականութեան հիմերն ալ այս երկու ճշմարտութիւնները եղած են, ամէնուն յայտնի՝ սկզբնական ժամանակներէն իսկ։

Բայց ամէնէն աւելի քրիստոնէական աւետարանի հրաշքներու եւ հոգեկան վարդապետութեան լոյսն է, որ փարատելով հեթանոսական ստուերները եւ պատուելով հրէական վարդոյրը, բարձրացուցած ու դրած է մարդս արարչական դադունքներու խորհուրդին առջեւ. ու երկրածին բանաւոր մարդը՝ երկնային զօրութենէ մը լուսաւորուած՝ կրցած է ուժգին կրկնել. «Կը հաւատամ մէկ Աստուծոյ... կը հաւատամ յաւիտեական կեանքին»։

Ահա ուրեմն քրիստոնէական հաւատամքին ալ երկու անսասան բեւեռները. Այբը եւ Քէն։